ՎՐԱՍՏԱՆ

«ՑՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅԵԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 17 - 18 (16820) ՇԱԲԱԹ 29 ՓԵՏՐՎԱՐԻ 2020Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ԷԿՈՆՈՄԻԿԱ

«ՎՐԱՍՏԱՆԸ ԵՎ ԱՇԽԱՐՀԸ-2020» ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Փետրվարի 26-ին իր աշխատանքն սկսեց «Վրաստանը եւ աշխարհը-2020» տնտեսական համաժողովը, որն անցկացվում է երկրորդ անգամ բրիտանական «THE ECONOMIST» ամսագրի «Աշխարհը 2020 թվականին» ամենամյա հրատարակության աջակցությամբ ու Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարության նախաձեռնությամբ: Այս տարի միջոցառմանը մասնակցում են տարբեր երկրների գործարար շրջանների 200 ներկայացուցիչ, Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ: Ներկաների թվում էր նաեւ Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը:

Վրաստանի ունեցած առաջընթացի վերլուծության, գլոբալ համատեքստում առկա մարտահրավերների եւ նոր հնարավորությունների քննարկմանը նվիրված համաժողովը բացեց Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան:

Իր խոսքում, վարչապետը մանրամասն կանգ առավ վերջին տարիներին երկրի էկոնոմիկայի տարբեր ոլորտներում իրականացվող բարեփոխումներին, հարկային համակարգի ազատականացմանը,

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՓԵՏՐՎԱՐԻ 25-Ը՝ ՕԿՈՒՊԱՑԻԱՅԻ ՕՐ

ԴՐՈՇՆԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄ՝ ՕԿՈՒՊԱՑԻԱՅԻ 99-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Փետրվարի 25-ին Վրաստանում վարչական բոլոր շենքերից եւ Վրաստանի արտասահմանյան դիվանագիտական բոլոր ներկայացուցչություններից՝ 99 տարվա վաղեմության խորհրդային օկուպացիայի օրվա կապակցությամբ, իջեցվեցին դրոշները:

Դրոշները իջեցվեցին նաեւ Վրաստանի նախագահի նստավայրի, Վրաստանի կառավարության, Վրաստանի խորհրդարանի եւ այլ շենքերից:

Օկուպացիայի օրվա կապակցությամբ, Վրաստանի խորհրդարանում տեղի ունեցավ միջոցառում, որի ընթացքում օրենսդիր մարմնի անդամները ծաղկեպսակ դրեցին խորհրդարանի շենքին ամրացված, 99-ամյա վաղեմության դեպքերի հիշատակման

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՈՒՃԱՊԻ ՊԱՏՃԱՌ ՉԿԱ»

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ ՉԿԱ

Փետրվարի 26-ին եւ 28-ին Վրաստանում գրանցվեցին նոր կորոնավիրուսի առաջին երկու դեպքերը: Այս մասին տեղեկացրեց Վրաստանի բռնազավթված տարածքներից փախստականների, աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական հարցերի նախարար էկատերինե Տիկարաձեն:

Նախարարի խոսքով, վարակը հաստատվել է Վրաստանի քաղաքացիներ՝ 50-ամյա տղամարդու, ով Իրանից Ադրբեջանի տարածքով ժամանել էր Վրաստան եւ 31-ամյա կնոջ մոտ, ով երիտասարդական խմբի հետ ուղեւորություն էր կատարում Իտալիայում:

Տղամարդուն տեղափոխել են ինֆեկցիոն հիվանդանոց: Նախարարի խոսքով, նրա վիճակը բավարար է:

Նույն օրը կայացավ Վրաստանի կառավարության նիստը, որի ընթացքում վարչապետ Գիորգի Գախարիան անդրադարձավ վերոնշյալ դեպքին: Նրա խոսքով, վարակի հետ կապված խուճապի պատճառ չկա, քանի որ իրավիճակը վերահսկվում է համապատասխան գերատեսչությունների կողմից:

- Ինչպես գիտեք, նախօրեին երկրում գրանցվել էր կորոնավիրուսի առաջին դեպքը: Նախեւառաջ,

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԻՆՏԵԳՐՄԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՔԱՅԼԵՐ

Փետրվարի 21-22-ը Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարարի աշխատակազմը, երկրի ժողովրդական պաշտպանին առընթեր ազգային փոքրամասնությունների խորհրդի ու փորձագետների հետ, Բորժոմիում անցկացված նիստում քննարկեց քաղաքացիական իրավահավասարության եւ ինտեգրման ուղղությամբ անցած հինգ տարիների ձեռքբերումները, արդյունքներն ու ծագած մարտահրավերները:

Նիստին ներկա էր նաեւ մարդու իրավունքների եւ գենդերային իրավահավասարության հարցերով վարչապետի խորհրդական Լելա Աքիաշվիլին:

Հնգամյա գործունեության հաշվետվությամբ, հանդես եկավ Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլին: Նրա խոսքով, անցած հինգ տարիներին քաղաքացիական իրավահավասարության եւ ինտեգրման տեսանկյունից իրականացված քայլերը հիանալի նախադր-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼՈՒՆ

Փետրվարի 27-28-ը, երկօրյա պաշտոնական այցով, Հայաստանում էր գտնվում Վրաստանի պաշտպանության նախարար Իրակլի Ղարիբաշվիլին: Այցի շրջանակներում, Վրաստանի պաշտպանության նախարարը հանդիպում ունեցավ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ:

Իրակլի Ղարիբաշվիլին հանդիպում ունեցավ Հայաստանի պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանի հետ: Բանակցությունների արդյունքում, երկու երկրների պաշտպանության նախարարները ստորագրեցին պաշտպանության ոլորտում երկկողմ համագործակցության 2020 թվականի ծրագիրը:

Նիկոլ Փաշինյանը, ողջունելով Վրաստանի պաշտպանության նախարարի եւ նրա գլխավորած պատվիրակության այցը Հայաստան, ընդգծեց հայ-վրացական ռազմավարական հարաբերությունների շարունակական զարգացման կարեւորությունը: Փաշինյանը նշեց, որ պաշտպանական բնագավառում փոխգործակցությունը Հայաստան-Վրաստան գործընկերության կարեւորագույն բաղադրիչներից է, եւ կարեւոր համարեց այսօր երկու երկրների պաշտպանության նախարարությունների միջեւ պաշտպանության ոլորտում երկկողմ համագործակցության 2020 թվականի ծրագրի ստորագրումը:

Իր հերթին, Իրակլի Ղարիբաշվիլին նշեց, որ ուրախ է կրկին այցելել բարեկամ Հայաստան, որի հետ Վրաստանը սերտ բարեկամական հարաբերություններ եւ ամուր գործընկերություն ունի:

Հանդիպմանը զրուցակիցները քննարկեցին երկկողմ հարաբերություններին, այդ թվում՝ վրացահայկական պաշտպանական փոխգործակցության օրակարգին վերաբերող հարցեր: Զրուցակիցներն ընդգծեցին, որ երկու երկր-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԿՐՈՆԱԿԱՆ

ԿՐՈՆԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՐԿԱՄՅԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ԶԵԿՈՒՅՈՂԸ ՆՇԵՑ, ՈՐ ԸՆԹԱՑՔԻ ՄԵՋ Է ՆՈՐԱՇԵՆ ԵՎ ՄՈՒՂՆՈՒ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ...

Փետրվարի 26-ին Թբիլիսիի «Բալթիմոր» հյուրանոցում կայացավ կրոնի հարցերով պետական գործակալության 2018-2019 թվականի հաշվետվության եւ «Հավատը ազատության ակտ է» ֆոտոալբոմի շնորհանդեսը: Շնորհանդեսին ներկա էին Վրաստանում գործող կրոնական կազմակերպությունների ղեկավարներ, Վրաստանի խորհրդարանի եւ կառավարության անդամներ, միջազգային կազմակերպությունների ու դիվանագիտական կորպուսի, լրատվամիջոցների ներկայացուցիչներ: Ներկաների թվում էին նաեւ Վիրահայոց թեմի առաջնորդ Կիրակոս վարդապետ Դավթյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը:

Գերատեսչության երկամյա գործունեության հաշվետվությամբ ելույթ ունեցավ կրոնի հարցերով պետական գործակալության նախագահ Զազա Վաշաղմաձեն: Նա իր խոսքում կանգ առավ երկրում կրոնի ազատության տեսանկյունից առկա իրավիճակի եւ գործակալության կողմից երկրում կրոնի ազատության, հանդուրժողականության մթնոլորտի ստեղծման ուղղությամբ իրականացված միջոցառումների վրա:

Ինչպես նշեց Զազա Վաշաղմաձեն, գործակալությունը սերտ համագործակցում է երկրի գործադիր եւ օրենսդիր իշխանությունների հետ, «Մարդու իրա-

վունքների պաշտպանության կառավարական գործունեության ծրագրի» շրջանակներում համատեղ միջոցառումներ անցկացնում տարածաշրջանային վարչությունների, մունիցիպալիտետների ղեկավարների հետ:

Հանրագումարային զեկույ-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԲԻՁԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻՆ ՀԱՆԴԻՊԵՑ ԴԵՐԵԿ ՄԻՏՉԵԼԻՆ

Կառավարող «Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստան» քաղաքական կուսակցության նախագահ Բիձինա Իվանիշվիլին հանդիպել է ամերիկյան ազգային ժողովրդավարական ինստիտուտի (NDI) նախագահ Դերեկ Միտչելի հետ:

Կուսակցության կենտրոնական գրասենյակում կայացած հանդիպմանը, կողմերը խոսեցին երկրում ընթացիկ քաղաքական գործընթացների եւ նախընտրական միջավայրի մասին: Նույն օրը կայացավ նաեւ Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի ու NDI-ի նախագահ Դերեկ Միտչելի հանդիպումը: Հանդիպմանը կողմերը քննարկեցին Վրաստանում NDI-ի գործունեության տարբեր ուղղություններին առնչվող հարցեր:

ՎԱՐՉԱՊԵՏԻ ԶՐՈՒՅՑԸ NDI-Ի ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ

Գիորգի Գախարիայի եւ Դերեկ Միտչելի հանդիպմանն առանձնակի նշվեց ԱՄՆ-Վրաստան ռազմավարական գործընկերության բարձր մակարդակը: Ուշադրությունը բեւեռվեց երկրում ընտրական տարվա ընթացքում համակցված համագործակցության անհրաժեշտության վրա: Ընդգծվեց ընտրարշավի նախօրեին Վրաստան NDI-ի նախագահի այցի կարեւորությունը:

Գիորգի Գախարիան եւ Դերեկ Միտչելը հանդիպմանն անդրադարձան նաեւ տեղական ինքնակառավարման եւ ներկայացուցչական մարմինների ուժեղացման նշանակությանն ու այդ առումով NDI-ի կողմից իրականացված գործունեությանը: Նշվեց այդ գործունեության կոնկրետ ուղղություններին քաղաքական երանգ չհաղորդելու անհրաժեշտությունը, քանի որ դա կարող է խանգարիչ հանգամանք դառնալ այն նպատակների իրականացման համար, որոնց կողմնորոշված են ազգային ժողովրդավարական ինստիտուտի կողմից իրականացվելիք նախագծերը: Կողմերի գնահատմամբ, կարեւոր է ընտրություններին մասնակից կողմերի բեւեռականացման մակարդակի նվազեցումը: Եվ այդ գործընթացում մասնակիցներից յուրաքանչյուրը կատարելու է իր դերը: Վարչապետը նշեց, որ 2020 թվականի ընտրությունները, ինչպես նաեւ 2012 թվականին հաջորդած ընտրությունները, կանցկացվեն միջազգային չափանիշներին համապատասխան բարձր մակարդակով:



ԹՈՒՐՔԻԱ

4,8 ՄԱԳՆԻՏՈՒԴՈՎ ԵՐԿՐԱՇԱՐԺ՝ ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ

Փետրվարի 24-ին 4,8 մագնիտուդով երկրաշարժ է գրանցվել Թուրքիայի արեւմտյան մասում՝ Վանի նահանգում:

Տարերքի օջախը գտնվում էր 7 կմ խորության վրա, էպիկենտրոնը՝ Իզմիր քաղաքից 90 կմ հյուսիս-արեւելք ընկած շրջանում, որտեղ մոտավորապես 2,5 մլն մարդ է բնակվում: Տուժածների եւ ավերածությունների վերաբերյալ տեղեկատվություն չկա: Եվս մի ցնցում է տեղի ունեցել փետրվարի 23-ին, Իրանի եւ Թուրքիայի սահմանի մոտ: 5,7 մագնիտուդով երկրաշարժի հետեւանքով տուժել է ավելի քան հարյուր մարդ, զոհվել է Թուրքիայի ինը քաղաքացի:

ՍԻՐԻԱ

ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐ՝ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ԵՎ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԶՈՐԱՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Փետրվարի 27-ին Սիրիայի կառավարական ուժերը գնդակոծել են Իդլիբում տեղակայված ահաբեկիչներին, թեպետ, տարածված տեղեկատվության համաձայն, գնդակոծության թիրախ են դարձել թուրք զինծառայողներ:

Այդ օրը Հայաթ Թահրիր աշ Շամ ահաբեկչական խմբավորման զինյալները սիրիական բանակի դիրքերի վրա հարձակման փորձ են ձեռնարկել Բեհուն բնակավայրի շրջանում: Սիրիական զորքերը պատասխան հարված են հասցրել, որին ենթարկվել են նաեւ «ահաբեկչական կազմավորումների մարտական շարքերում գտնվող» թուրք զինծառայողները: Մինչդեռ, թուրքական կողմի տվյալների համաձայն, այդ շրջանում թուրքական բանակի ոչ մի ստորաբաժանում չկար եւ չպետք է լիներ:

Ինչպես հայտնել է BBC-ն, Սիրիայի Իդլիբի նահանգում ավիահարվածի հետեւանքով, առնվազն 33 թուրք զինծառայող է զոհվել: Ի պատասխան Իդլիբում հասցված հարվածի, թուրքական զորքերը ինչպես օդուժը, այնպես էլ՝ ցամաքային ուժերը, կրակ են բացել սիրիական ռեժիմի «բոլոր հայտնի» թիրախների վրա:

ԱՄՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԵՄ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՐԿԱՐԱՁԳՎԵՑԻՆ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը մեկ տարով երկարաձգել է Ռուսաստանի դեմ պատժամիջոցները, որոնք սահմանվել էին 2014 թվականի մարտին, Ղրիմում ստեղծված իրադրության պատճառով:

Հիշեցնենք, որ Ուկրաինայի իրադրության կապակցությամբ Ռուսաստանի դեմ պատժամիջոցները Բարաք Օբամայի վարչակազմը սահմանել է 2014 թվականին, դրանք ամեն տարի 12 ամսով երկարաձգվում են:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼՈՒՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ներին ու ժողովուրդներին միավորում են պատմամշակութային դարավոր կապերը եւ քրիստոնեական արժեհամակարգը, որոնք ամուր հենք են բարեկամական համագործակցության խորացման ու սերտացման համար:

Անդրադառնալով տարածաշրջանային անվտանգության մարտահրավերներին՝ Նիկոլ Փաշինյանն ու Իրակլի Ղարիբաշվիլին մտքեր փոխանակեցին հակամարտությունների խաղաղ կարգավորման, այդ ուղղությամբ փոխադարձ ջանքերի կարեւորության շուրջ:

Այցի շրջանակներում, Վրաստանի պաշտպանության նախարարը հանդիպում ունեցավ նաեւ իր հայ գործընկերոջ հետ: Երկու երկրների պաշտպանության գերատեսչությունների ղեկավարների առանձնազրույցին հաջորդեց պատվիրակությունների ընդլայնված կազմով հանդիպումը, որի ընթացքում քննարկվեցին միջազգային եւ տարածաշրջանային անվտանգությանն ու կայունությանը, պաշտպանական ոլորտում երկու երկրների համագործակցությանն առնչվող հարցեր, ինչպես նաեւ Վրաստանի եւ Հայաստանի մասնակցությամբ բազմակողմ ձեւաչափով փոխգործակցության հնարավորությունները:

Դավիթ Տոնոյանը եւ Իրակլի Ղարիբաշվիլին ստորագրեցին Վրաստանի պաշտպանության նախարարության եւ Հայաստանի պաշտպանության նախարարության միջեւ պաշտպանության ոլորտում երկկողմ համագործակցության 2020 թվականի ծրագիրը:

Հանդիպման արդյունքներով, երկու երկրների պաշտպանական գերատեսչությունների ղեկավարները հանդես եկան համատեղ հայտարարությամբ:

Այցի շրջանակներում, կայացել են Վրաստանի պաշտպանության նախարար Իրակլի Ղարիբաշվիլու հանդիպումները

Հայաստանի արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականյանի եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ:

Վրաստանի պաշտպանության նախարարի գլխավորած պատվիրակությունն այցելեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, հարգանքի տուրք մատուցեց Հայոց ցեղասպանության սրբադասված նահատակների հիշատակին:

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Թբիլիսիի Holiday Inn հյուրանոցում անցկացվեց Վրաստան-Հայաստան սահմանային մունիցիպալիտետների տեղական զարգացման խորհրդաժողովը:

ՄԱԿ-ի զարգացման ծրագրի աջակցությամբ անցկացված միջոցառմանը, Վրաստանի եւ Հայաստանի տեղական իշխանության ներկայացուցիչները ծրագրեցին երկու երկրների սահմանային մունիցիպալիտետների միջեւ համագործակցության հեռանկարները: Որպես համագործակցության ոլորտներ՝ նշվեցին մունցիպալային սպասարկումները, գբոսաշրջությունը, փոքր գործարարությունը, էկոլոգիապես մաքուր էկոնոմիկան:

Վրաստանի տեղական ինքնակառավարման ազգային ասոցիացիայի Հայաստանի համայնքների միության նախաձեռնությամբ անցկացված Վրաստան-Հայաստան սահմանային մունիցիպալիտետների զարգացման խորհրդաժողովին ներկա էին Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների փոխնախարար Մզիա Գիորգոբիանին ու ՄԱԿ-ի զարգացման ծրագրի մշտական ներկայացուցիչ Լուիզա Վինտոնը:

ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑ

ՔՈՒԹԱՅԻՍԻԻ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆԸ ՈՒՂԵՎՈՐԱՀՈՍՔԻ ԱՃԻ ՏԵՄՊԵՐՈՎ ԵՐԿՐՈՐԴՆ Է ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

Եվրոպայի օդանավակայանների միջազգային խորհրդի (ACI Europe) տվյալներով, Քութայիսիի Դավիթ Աղմաշենեբելու անվան միջազգային օդանավակայանը, 2019 թվականի տվյալներով, դարձել է երկրորդը Եվրոպայում, ըստ ուղեւորահոսքի աճի դինամիկայի:

Ըստ ACI Europe-ի դասակարգման, օդանավակայանները բաժանվում են 4 խմբի: Առաջին կատեգորիային առնչվում են օդանավակայան-հսկաները, որոնք նախատեսված են տարեկան ավելի քան 25 մլն ուղեւորի համար: Երկրորդը՝ 10-25 մլն ուղեւորահոսքով, երրորդը՝ 5-10 մլն, իսկ չորրորդը՝ մինչեւ 5 մլն: Քութայիսիի Դավիթ Աղմաշենեբելու անվան միջազգային օդանավակայանը չորրորդ կատեգորիայում է: ACI Europe-ի համաձայն, 2019թ. այստեղ ուղեւորահոսքը կազմել է 41,6%: IV խմբում առաջատարը Հյուսիսային Մակեդոնիայի Օհրիդ օդանավակայանն է (+72,1%):

2018-ի արդյունքներով, Քութայիսիի օդանավակայանը ACI Europe վարկանիշի առաջատարն էր. այդ ժամանակ ուղեւորահոսքը կազմել է 52,5%: Այն օդանավակայանների շարքում, որոնցում ուղեւորահոսքը գերազանցում է 25 միլիոնը, ամենամեծ ցուցանիշն ունեցել է Վիեննան (+17,1%): Երկրորդ կատեգորիան (տարեկան 10-25 մլն ուղեւոր) գլխավորում է Կիեւի «Բորիսպոլ» օդանավակայանը (+21,1%), իսկ երրորդը՝ Կրակովի օդանավակայանը (+24,2%):

Վրաստանի Օդանավակայանների միավորման տեղեկությամբ, Քութայիսի Դավիթ Աղմաշենեբելու անվան միջազգային օդանավակայանում 2020թ. հունվարին ուղեւորահոսքը, նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատ, աճել է 43%-ով: Այդպիսով, նախորդ ամիս Քութայիսիի օդանավակայանն ընդունել է ավելի քան 79,7 հազար ուղեւոր: Ընդհանուր առմամբ, 2020թ. հունվարին Վրաստանի օդանավակայանները սպասարկել են ավելի քան 314 հազար ուղեւորի, ինչը 3%-ով պակաս է նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատ (ավելի քան 324,5 հազար ուղեւոր):

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵ

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՓԵՏՐՎԱՐԻ 25-Ը՝ ՕԿՈՒՊԱՑԻԱՅԻ ՕՐ

ԴՐՈՇՆԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄ՝ ՕԿՈՒՊԱՑԻԱՅԻ 99-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հուշատախտակին:

Սգո միջոցառումներ անցկացվեցին նաեւ Գորիում եւ Կոջորիում: Գորիում Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին հարգանքի տուրք մատուցեց եւ ծաղկեպսակ դրեց Հայրենիքի անկախության համար զոհվածների հուշակոթողին: Թբիլիսիի արվարձան Կոջորիում անցկացված միջոցառմանը մասնակցեց Վրաստանի պաշտպանության նախարար Իրակլի Ղարիբաշվիլին: Նա ծաղկեպսակ դրեց 1921 թվականի փետրվարին Վրաստանի անկախության համար զոհված յունկերների հուշակոթողին:

Հիշեցնենք, որ 99 տարի առաջ, 1921

թվականի փետրվարի 25-ին խորհրդային 11-րդ կարմիր բանակը Կոջորիում եւ Տաբախմելայում, ճնշելով Թբիլիսին պաշտպանող յունկերների դիմադրությունը, մտան Վրաստանի մայրաքաղաք: Թբիլիսիի գրավումով խորհրդային զորքերը տապալեցին 1918 թվականի մայիսին հռչակված եւ ապա համընդհանուր ու ազատ ընտրությունների արդյունքում ընտրված Վրաստանի առաջին ժողովրդավարական հանրապետությունը: Այդ օրվանից Վրաստանը կորցրեց պետական անկախությունը եւ կարողացավ վերականգնել այն միայն 70 տարի անց՝ 1991 թվականի մարտի 31-ի համաժողովրդական հանրաքվեով ու նույն թվականի ապրիլի 9-ի հռչակագրով:

Նշենք, որ Վրաստանի խորհրդարանի՝ 2010 թվականի հուլիսի 21-ի որոշմամբ, փետրվարի 25-ը հայտարարվեց խորհրդային օկուպացիայի օր:

ԷԿՈՆՈՄԻԿԱ

«ՎՐԱՍՏԱՆԸ ԵՎ ԱՇԽԱՐՀԸ-2020» ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

գործադիր իշխանության կողմից ներդրումների խրախուսմանն ուղղված միջոցառումների, համաշխարհային տնտեսական համակարգում Վրաստանի տեղի ու դերի թեմաներին: Նա հույս հայտնեց, որ ներկայիս համաժողովը նոր ընթացք կհաղորդի տնտեսական կապերի ամրապնդման ու խորացման գործում: Վարչապետը խոսեց նաեւ վերջին տարիներին տնտեսական կայուն աճի մասին՝ նշելով, որ չնայած արտաքին գործոնների բացասական ազդեցության, վերջին ժամանակների տնտեսական աճի ցուցանիշը գերազանցեց սպասելիքները, ինչը նպաստեց նոր աշխատատեղերի ստեղծմանն ու սոցիալական իրավիճակի կայունացմանը:

- Մեր տնտեսությունն աճում է, մեր արտահանումն աճում է, մեր ազգային արժույթը ուժեղանում է, եւ սա ճիշտ դրամավարկային ու ճիշտ տնտեսական քաղաքականության արդյունքն է,- հայտարարեց վարչապետը:

Համաժողովին ելույթ ունեցան նաեւ Վրաստանի փոխվարչապետ, տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարար Մայա Ցքիտիշվիլին, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Նաթիա Թուրնավան, ֆինանսների նախարար Իվանե Մաճավարիանին, երկրի գործադիր իշխանության մյուս ներկայացուցիչները:

ԿՐՈՆԱԿԱՆ

ԿՐՈՆԻ ՀԱՐԾԵՐՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՐԿԱՄՅԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ցում խոսելով Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմի մասին, Կրոնի հարցերով պետական գործակալության նախագահ Զազա Վաշաղմաձեն հավաքվածներին հայտնեց, որ ներկա դրությամբ Վրաստանում գործում են ավելի քան վեց տասնյակ հայկական եկեղեցիներ, որոնց մեծ մասը մշակութային ժառանգության հուշարձաններ են: Դրանք գտնվում են պետության տնօրինության ներքո, ուստիեւ, պետությունն է իրականացնում դրանց վերանորոգումը, խնամքը, պահպանումը:

Թբիլիսիում հանդիսավորապես բացվեց առաջնորդանիստ Սուրբ Գեւորգ եկեղեցին, որի վերանորոգման ծախսերը մասնակիորեն հոգաց «Քարթու» հիմնադրամը: Ավարտվեցին նաեւ Թբիլիսիում գտնվող Նորաշեն եկեղեցու ամրացման եւ պահածոյացման աշխանքները, որի համար պետության կողմից հատկացվել էր շուրջ մեկ միլիոն լարի: Ընթացքի մեջ են Մուղնու Սուրբ Գեւորգ եկեղեցու ամրացման աշխատանքները:

Շնորհանդեսին ելույթ ունեցան նաեւ Վրաստանի խորհրդարանի առաջին փոխխոսնակ Գիորգի Վոլսկին, վարչապետի աշխատակազմի ղեկավար Գիորգի Սոխակիան, Ռուսաստանի հետ հարաբերությունների հարցերով Վրաստանի վարչապետի հատուկ ներկայացուցիչ Զուրաբ Աբաշիձեն, լրագրող Զամլետ Խուխաշվիլին, ուրիշներ:

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ

ՍԻԳԱՐԵՏԸ՝ 15 ԼԱՐԻ՞

Օրերս վրացական որոշ լրատվամիջոցներ տարածել էին տեղեկություն, որի համաձայն Վրաստանի ֆինանսների նախարար Իվանե Մաճավարիանին խորհրդարանում հայտարարել էր, ծխախոտի գնածի, ընդհուպ մինչեւ 15 լարիի հասնելու մասին:

Վրաստանի ֆինանսների նախարար Իվանե Մաճավարիանու հայտարարության համաձայն, սիգարետի գինը 15 լարիի հասցնելու մասին տարածած տեղեկատվությունն իրականությանը չի համապատասխանում: Նրա խոսքով, Եվրամիության հետ Ասոցիացման համաձայնագրում նշված է, որ ակցիզային համապատասխանությունը պետք է իրականացվի մինչեւ 2022 թվականը, թեպետ ելնելով սոցիալական ծանր պայմաններից, այդ ժամկետը երկարաձգված է մինչեւ 2026 թվականը:

- Ծխախոտի թանկացման մասին լուրը չի համապատասխանում իրականությանը: Համոզված եմ, որ Ասոցիացման համաձայնագրում նշված ժամկետները կերկարաձգվեն: Մենք սերտ համագործակցություն ենք իրականացնում մեր գործընկերների հետ եւ պարզաբանեցինք, որ 2020-2021 թվականներին ակցիզի հարկի բարձրացում չենք նախատեսում: Ծրագրում ենք նոր հանդիպում, որտեղ կներկայացնենք երկամյա ծրագիրը: Իսկ ինչ վերաբերում է այն հարցին, թե 2026 թվականի ակցիզային հարկը կհավասարեցվի՞ արդյոք եվրոպականին, կարծում եմ, որ կհասնենք ժամկետի երկարաձգմանը եւ գները կհամապատասխանեցնենք միայն այն ժամանակ, երբ կանդամակցենք Եվրամիությանը,- հայտարարեց Իվանե Մաճավարիանին:

ԴԱՏԱԿԱՆ

ԽՈՐԱՎԱՅԻ ՓՈՂՈՑԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ ՀԱՆԳԵՑՐԵՑ ԱՆՉԱՓԱՀԱՍԻ 11 ՏԱՐՎԱ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ

Թբիլիսիի քաղաքային դատարանը, Խորավայի փողոցում Դավիթ Սարալիձեի խմբային, կանխամտածված սպանության մեջ մեղադրվող Միխեիլ Կալանդիային սահմանել է 15 տարվա բանտարկություն: Սակայն, ըստ անչափահասների արդարադատության օրենսգրքի, պատիժը կրճատվել է մեկ քառորդով, եւ նա դատապարտվել է 11 տարի երեք ամիս ժամկետով:

Դատավճիռը հայտարարել է Թբիլիսիի քաղաքային դատարանի դատավոր Նիկոլոզ Մարսագիշվիլին:

Միխեիլ Կալանդիան, Թբիլիսիի Խորավայի փողոցում Դավիթ Սարալիձեի խմբային, կանխամտածված սպանության մեղադրանքով, ձերբակալվել էր անցած տարվա հունիսի 4-ին:

Հիշեցնենք, որ 2017 թվականի դեկտեմբերի 1-ին Խորավայի փողոցում դանակահարվել էր երկու դեռահաս: Լեւան Դադունաշվիլին մահացել էր հիվանդանոցի ճանապարհին, իսկ Դավիթ Սարալիձեն դեկտեմբերի 2-ին հիվանդանոցում:



ԹԲԻԼԻՍԻԻ ՓՈԽԱՐԵՆ, ՄԻՆԻՍՏԵՐԻԱԼԸ ԿԱՆՑԿԱՑՎԻ ՍՏՐԱՍԲՈՒՐԳՈՒՄ

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 130-րդ նստաշրջանը, Թբիլիսիի փոխարեն, անցկացվելու է Ստրասբուրգում: Այս մասին հայտնեց Վրաստանի արտաքին գործերի նախարար Դավիթ Զալկալիանին:

Նրա խոսքով, համապատասխան որոշումը կայացվել է Ստրասբուրգում, նախարարների տեղակալների կոմիտեի նիստին:

Վրաստանի նախագահության շրջանակներում, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 130-րդ նստաշրջանը մայիսին պետք է անցկացվեր Թբիլիսիում, սակայն անորոշություն է ստեղծվել Ռուսաստանի պատվիրակության, այդ թվում՝ արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովի նստաշրջանին հնարավոր մասնակցության հետ կապված: Մասնավորապես, խոսվում է օկուպացիային վերաբերող Վրաստանի օրենքի մասին, որի պայմանները Սերգեյ Լավրովը խախտել է:

ԼԱՐԻԻ ԿՈՒՐՍԸ ԿԱՅՈՒՆԱՆՈՒՄ Է

Վերջին երեք ամսում ազգային արժույթն ամրապնդվել է մոտ 20 թեթրիով: Փետրվարի 28-ի դրությամբ, մեկ դոլարի պաշտոնական գինը կազմում է 2 լարի եւ 79 թեթրի: Արտարժույթի շուկայում ընթացող գործընթացները եւ փոխարժեքի համեմատական կայունացումը տնտեսագետները կապում են Ազգային բանկի իրականացրած քայլերի հետ, որը նախատեսում է բարձրացնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը եւ ինտերվենցիան:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԸ ԿՄԵԿՆԱՐԿԵՆ ՄԱՐՏԻ 9-ԻՑ

Վրաստանի հանրային եւ մասնավոր դպրոցներում մարտի 9-ից կմեկնարկեն գարնանային արձակուրդները: Դասընթացները հանրակրթական հաստատություններում կվերսկսվեն մարտի 16-ից:

Վրաստանում աշակերտները կհանգստանան նաեւ Զատկական տոների օրերին: Ուսումնական գործընթացը դպրոցներում կդադարի ապրիլի 17-ին եւ կվերսկսվի ապրիլի 21-ին:

Դասընթացներ չեն իրականացվի նաեւ ապրիլի 9-ին՝ Ազգային միասնության օրվա, մայիսի 12-ին՝ Անդրեաս Առաքյալի հիշատակի օրվա եւ մայիսի 26-ին՝ Վրաստանի անկախության օրվա առիթներով:

ԱՎԱՐՏՎԵԼ Է ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Ավարտվել է հանրային դպրոցների տնօրինության ցանկություն ունեցողների հավաստագրման քննությունների գրանցումը:

Վրաստանի կրթության նախարարության տեղեկատվության համաձայն, հանրային դպրոցների տնօրինության ցանկություն ունեցողների հավաստագրման քննությունների համար գրանցվել է 2 244 դիմորդ: 170 դիմորդ կա Սամցխե-Ջավախեթիի, 205՝ Քվեմո Քարթլիի տարածաշրջաններից:

EDU.ARIS.GE-ի տեղեկատվությամբ, այսօրվա դրությամբ, Վրաստանում 2083 հանրային դպրոցներից 1022-ի տնօրենները պաշտոնակատարի կարգավիճակ ունեն: Տնօրենների պաշտոնակատարները պարտավոր են հանձնել հավաստագրման քննություններ:

Քննությունների անցկացման տեւողության, ժամանակի եւ վայրի մասին ավելի ուշ որոշում կկայացնի Վրաստանի ԿԳ նախարարը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆՎԵԼ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻՑ

ԿԱՐԴԱՑԵՔ, ՀԻՇԵՔ ԵՎ ՓՈԽԱՆՑԵՔ ՁԵՐ ԾԱՆՈԹՆԵՐԻՆ. ԲԱՐԵՎԵԼԻՍ ԽՈՒՍԱՓԵՔ ՁԵՌՔՍԵՂՄՈՒՄՆԵՐԻՑ, ՀԱՄԲՈՒՐՎԵԼՈՒՑ, ԲԱԶՄԱՄԱՐԴ ՄԻՋԱՎԱՅՐԻՑ

Նոր կորոնավիրուսը շարունակում է տարածվել իր սկզբնաղբյուր Չինաստանում եւ մի շարք այլ երկրներում՝ սպառնալով աշխարհին: Լինելով բոլորովին նոր տեսակի վիրուս՝ այն թույլ չի տալիս բժիշկներին հայտնաբերել իր դեմ պայքարի լավագույն եղանակ:

«Կորոնավիրուս» բառը թարգմանաբար նշանակում է պսակածեւ վիրուս: Իր անունն ստացել է պսակով շրջապատված տեսք ունենալու պատճառով:



Առաջին ախտանիշը մրսելու զգացումն է: Նման հիվանդների մոտ հեշտությամբ տարածվում են շնչառական մահացու վիրուսներ:

Կորոնավիրուսներն իրենց մասին մի քանի անգամ են հիշեցրել: Սուր շնչառական ծանր համախտանիշ անվանումը կրող կորոնավիրուսը տարածվել է Չինաստանի կենդանիների շուկայից: Հետո տարածվեց մերձավորարեւելյան շնչառական վիրուսը:

Մերձավոր Արեւելքում տարածվել է չղջիկներից, ապա՝ նաեւ ուղտերի շրջանում ու վարակել մարդկանց: Այսինքն, կորոնավիրուսներն ունենում են միջանկյալ թիրախ, որից հետո տեղափոխվում են մարդու օրգանիզմ:

Վերջին կորոնավիրուսը սկսվել է Չինաստանի Ուհանի քաղաքում: Այն մարդուց մարդ է տարածվում հազի, փռշտոցի ու հպման միջոցով: Ավելի հեշտ է վարակվել այս կորոնավիրուսով, քան էբոլայով:

Ավելի խոցելի են 65-ից բարձր տարիք ունեցող անձինք, քանի որ հիվանդությունն ավելի հեշտությամբ է բարդություններ առաջ բերում նրանց օրգանիզմում:

Բարդությունների դեպքում առաջ են գալիս թոքաբորբ, բրոնխիտ, երիկամների անբավարարություն, հեղուկի կուտակումներ թոքերում: Հիվանդությունը կարող է հանգեցնել մահվան:

Երկրորդական մանրէածին հիվանդության դեպքում օգնության են հասնում հակաբիոտիկները, շնչառական խնդիրների դեպքում՝ շնչառությունը կարգավորող սարքավորումները: Սակայն, այս նոր կորոնավիրուսի դեմ արդյունավետ պայքարելու որոշակի բուժում դեռեւս չկա: Եվ աշխարհի տարբեր երկրներում են գիտնականները սկսել որոնել այդ բուժումը:

Քանի որ կորոնավիրուսով վարակման ու դրանով պայմանավորված մահացությունների դեպքերը գնալով աճում են, Վրաստանի աշխատանքի, առողջապահության, սոցիալական պաշտպանության նախարարությունը քաղաքացիներին հիշեցնում է. գիտականորեն ապացուցվել է, որ վարակի փոխանցման հիմնական գործոն են դարձել թեթեւ նախուտեստները, մասնավորապես՝ ծովամթերքից եւ օձից պատրաստված ուտեստները: Չհիվանդանալու, վարակը Վրաստան չներբերելու եւ կանխելու համար, առողջապահության նախարարությունը հորդորում է.

**** միջազգային ուղեւորություններ ծրագրելիս՝ հաշվի առնել տվյալ երկրի համաճարակային իրավիճակը,***

**** եթե գտնվում եք Չինաստանում, հատկապես՝ Ուհան կամ հարակից քաղաքներում, ապա խուսափեք կամ բացառեք կենդանական (հատկապես՝ ծովամթերքի) շուկաներ այցելել,***

**** օգտագործեք միայն լավ եփված սնունդ, շշալցված ջուր,***

**** խուսափեք շնչառական վարակներով հիվանդների հետ սերտ շփումից,***

**** մի այցելեք կենդանաբանական այգիներ կամ մի մասնակցեք մշակութային միջոցառումների, որտեղ ներգրավված են կենդանիներ,***

**** օգտագործեք անհատական պաշտպանիչ միջոցներ (դիմակներ),***

**** լվացեք ձեռքերը դրսից տուն գալիս եւ սնունդ ընդունելուց առաջ,***

**** գրիպանման երեւույթների առկայության դեպքում, դիմեք բժշկի,***

**** մի զբաղվեք ինքնաբուժմամբ,***

**** եթե վերադարձել եք Չինաստանից եւ ձեզ մոտ առկա են գրիպանման հիվանդություններին բնորոշ ախտանշաններ, ապա դիմեք բժշկական օգնության՝ նշելով ճամփորդության մասին:***

ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՈՒՃԱՊԻ ՊԱՏՃԱՌ ՉԿԱ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ուզում եմ շեշտել, որ խուճապի պատճառ չունենք: Առողջապահության նախարարությունը, համապատասխան գերատեսչությունները եւ միջգերատեսչական համակարգող խորհուրդը լիարժեք վերահսկում են իրավիճակը,- ասաց Գիորգի Գախարիան եւ հավելեց, որ գերատեսչությունների արդյունավետ աշխատանքի արդյունքն է, որ վարակի առաջին փաստը հայտնաբերվել է հենց սահմանին, ուստի վարակվածը շփում չի ունեցել մյուս քաղաքացիների հետ:

- Առաջին անգամ սահմանին նման դեպք արձանագրվեց, որի համար մենք պետք է շնորհակալություն հայտնենք առողջապահական համակարգի յուրաքանչյուր աշխատողի, ինչպես նաեւ սահմանապահներին ու մաքսային ծառայություններ իրականացնողներին,- ընդգծեց Գիորգի Գախարիան:

Իր հերթին, Վրաստանի առողջապահության նախարար Էկատերինե Տիկարաձեն հայտարարեց, որ կորոնավարակի ռիսկը մեծացել է, չնայած, ձեռնարկվել են բոլոր միջոցները, որոնք զգալիորեն նվազեցնում են վարակի տարածման հնարավորությունները:

- Լուգարի լաբորատորիան ամեն օր տրամադրում է լրատվություն ընթացիկ իրադարձությունների մասին: Այս գործընթացը ես վերցրել եմ իմ անձնական վերահսկողության տակ: Բոլոր գերատեսչությունները համակարգված աշխատում են: Ակտիվորեն ներգրավված է արտաքին գործերի նախարարությունը: Մենք մանրամասն տեղեկություններ ունենք այն ուղեւորների մասին, ովքեր մուտք են գործում Վրաստան: Իհարկե վտանգը մեծ է, սակայն իրականացնում ենք բոլոր միջոցառումները, որոնք զգալիորեն նվազեցնում են այդ ռիսկերը,- հայտարարեց էկատերինե Տիկարաձեն:

Նրա խոսքով, նոր կորոնավիրուսի պատճառով, այս պահի դրությամբ ուսումնական գործընթացի դադարեցում չի նախատեսվում, քանի որ համաճարակի վտանգ չկա, բացակայում է նաեւ արտակարգ իրավիճակ հայտարարելու անհրաժեշտությունը:

Կառավարության նիստում կորոնավիրուսի տարածման դեմ պայքարի մասին տեղեկատվությամբ հանդես եկավ հիվանդությունների վերահսկման կենտրոնի ղեկավար Ամիրան Գամղրելիձեն: Նրա խոսքով, բնակիչների հիմնական հանձնարարականն այն է, որ սահմանափակեն ճանապարհորդությունը դեպի այն երկրներ, մասնավորապես՝ Չինաստան, Իրան, Հարավային Կորեա, Իտալիա, որտեղ հատկապես են տարածված կորոնավիրուսի դեպքերը, ինչպես նաեւ խստորեն հետեւեն առողջապահության համաշխարհային կազմակերպության հանձնարարականներին:

Գամղրելիձեն հավաստիացրեց, որ ախտորոշման եւ բուժման ծախսերն ամբողջությամբ կհոգա պետությունը:

ՏԱԳՆԱՊԱԼԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Փետրվարի 28-ի դրությամբ, Չինաստանում կորոնավիրուսից մահացածների թիվը հասել է 2700-ի, վարակակիրներինը գերազանցում է 78400-ը, ընդ որում, ավելացել է նաեւ բուժվածների թիվը, այն հասել է 32 400-ի:

Պաշտոնական վերջին տվյալներով, Չինաստանում բժիշկների հսկողության տակ է ավելի քան 71 000 մարդ, որոնք վարակվածների հետ ունեցել են սերտ կապ:

Փետրվարի 28-ի դրությամբ, աշխարհում, բացառությամբ՝ Չինաստանի մայրցամաքային մասի, COVID-9 կորոնավիրուսով վարակվածների թիվը հասել է 3530-ի՝ մեկ օրում ավելանալով հիվանդանալու 627 հայտնաբերված դեպքով:

Կորոնավիրուսի զոհերի թիվը մեկ օրում 49-ից հասել է 57-ի. 19 մարդ մահացել է Իրանում, 13-ը՝ Հարավային Կորեայում, 12-ը՝ Իտալիայում, 7-ը՝ Ճապոնիայի տարածքում (նրանցից չորսը Diamond Princess ճամփորդական նավի ուղեւորներ են), երկուսը՝ Հոնկոնգում, երկուսը՝ Ֆրանսիայում, մահվան ելքով մեկական դեպքեր են գրանցվել Թայվանում եւ Ֆիլիպիններում:

Ամենից շատ հիվանդներ՝ 1595, հայտնաբերվել են Հարավային Կորեայում, Ճապոնիայի տարածքում՝ 862 մարդ, որոնցից 690-ը Diamond Princess-ի ուղեւորներ են ու անձնակազմի անդամներ: Այն կարանտինի մեջ է Յոկոհամայում: Իտալիայում հրատարակությունը հաշվել է 374 հիվանդ, Իրանում՝ 139, Սինգապուրում՝ 93, Հոնկոնգում՝ 91, ԱՄՆ-ում՝ 60, Թաիլանդում՝ 40, Բահրեյնում՝ 33, Թայվանում՝ 31, Ավստրալիայում՝ 23, Մալայզիայում՝ 22, Գերմանիայում, Ֆրանսիայում եւ Քուվեյթում՝ 18-ական, Վիետնամում՝ 16, Արաբական Միացյալ Էմիրություններում եւ Մեծ Բրիտանիայում՝ 13-ական, Մակաոյում եւ Կանադայում՝ 10-ական:

Հիվանդության տասից պակաս դեպքեր են գրանցվել Իսպանիայում, Իրաքում, Ֆիլիպիններում, Խորվաթիայում, Հնդկաստանում, Ավստրիայում, Քուվեյթում, Ֆինլանդիայում, Իսրայելում, Օմանում, Ռուսաստանում, Պակիստանում, Աֆղանստանում, Ալժիրում, Բելգիայում, Կամբոջայում, Շվեդիայում, Բրազիլիայում, Եգիպտոսում, Ֆինլանդիայում, Իսրայելում, Հունաստանում, Հյուսիսային Մակեդոնիայում, Նորվեգիայում, Լիբանանում, Նեպալում, Շրի-Լանկայում, Խորվաթիայում, Ռումինիայում եւ Շվեյցարիայում:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԻՆՏԵԳՐՄԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՔԱՅԼԵՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

յալ են 2020 թվականին ծրագրված միջոցառումների իրականացման համար:

- Այսօր մենք, ժողովրդական պաշտպանին առընթեր ազգային փոքրամասնությունների խորհրդի հետ, կքննարկենք բոլոր այն հարցերը, որոնք նշանակալից են քաղաքացիական իրավահավասարության մակարդակի բարձրացման եւ ինտեգրման տեսանկյունից: Իրականում այդ ուղղությամբ ունենք զգալի առաջընթաց, թեպետ, առաջիկա ծրագրերը մշակելիս՝ մենք պետք է դրսեւորենք ինքնաքննադատական մոտեցում ու օբյեկտիվություն, որպեսզի կարողանանք ծրագրել արդյունավետ քաղաքականություն,- հայտարարեց Քեթեւան Ցիխելաշվիլին եւ հավելեց, որ անցած տարիներն աչքի ընկան Վրաստանի համար բացառիկ ծրագրերի իրականացմամբ:

- Այսօր էականորեն այլ իրավիճակ է, քան 2015 թվականին, այսօր ունենք ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների բացարձակապես այլ սերունդ, ովքեր ոչ միայն տիրապետում են մայրենի լեզվին, այլ նաեւ պետական լեզվին, ստացել են մասնագիտական ունակությունների հարուստ գիտելիք, նրանք ստաժավորման նոր ծրագրով հանրային ծառայություններում իրենց ուժերն են փորձում եւ առաջիկա գործունեության հուսալի նախադրյալներ հիմնում: Նրանք պատրաստ են լրիվությամբ ներգրավվել երկրի կյանքի բոլոր ոլորտներում,- հայտարարեց Քեթեւան Ցիխելաշվիլին:

Նշենք, որ Բորժոմիում անցկացված միջգերատեսչական հանձնաժողովի նիստն անցկացվեց ԱՄՆ միջազգային գործակալության (USAID), Վրաստանում ՄԱԿ-ի ասոցիացիայի (UNAG), հանդուրժողականության, քաղաքացիական գիտակցության եւ ինտեգրման աջակցության ծրագրի» (PITA) աջակցությամբ:

ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ